

## Տեղեկատվական գրքույկ





# Գենդերը և Աղետների ռիսկի նվազեցումը

Հայաստան 2010

UNDP
Հայաստան

Տեղեկատվական ձեռնարկը մշակվել և տպագրվել է ՄԱԶԾ «Աղետների նախապատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» Ծրագրի միջոցներով:

Սույն ձեռնարկում արտահայտված տեսակետները անպայման չէ, որ ներկայացնեն ՄԱԿ-ի կամ ՄԱԶԾ պաշտոնական տեսակետները ու քաղաքականությունը:

# Գենդերը և Աղետների ռիսկի նվազեցումը

*Տեղեկատվական գրքույկ*

Հայաստան 2010

## Երախտագիտության խոսք

«Գենդերը և Աղետների ռիսկի նվազեցումը» տեղեկատվական գրքույկը պատրաստվել է ՄԱԶԾ «Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարո-ղությունների հզորացում» ծրագրի գենդերի միջազգային փորձագետ Մանգաթաի Ալիվելու Ռամիզեթիի և գենդերի տեղական փորձագետ Նունե Հարությունյանի կողմից:

*Այս տեղեկատվական գրքույկի նպատակն է՝ բարձրացնել աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում գենդերային հարցերի վերաբերյալ կանանց և տղամարդկանց տեղեկացվածությունը: Գրքույկը հասցեագրվում է տարբեր շահառուներին, ներառյալ՝ ազգային, մարզային և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքականություն մշակողներին, քաղաքացիական, հասարակական կազմակերպություններին, գենդերային հարցերով զբաղվող ակտիվիստներին, ինչպես նաև գենդերի և աղետների ռիսկերի նվազեցման հիմնահարցերով հետաքրքրված կանանց և տղամարդկանց:*

# Բովանդակություն


**1. Գենդեր հասկացությունը . . . 7**

1.1 Գենդերային դերեր . . . 7

1.2 Գենդերային խտրականություն . . . 7

1.3 Գենդերային հավասարություն . . . 8

1.4 Գենդերային բռնություն . . . 8

**2. Գենդերը և Աղետների ռիսկերի նվազեցումը . . . 9**

**3. Կանանց կարգավիճակը Հայաստանում . . . 10**

3.1 Գենդերային ռազմավարության հայեցակարգ, Հայաստան . . . 11

3.2 ՄԱԶԾ և «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» երկրորդ փուլի ծրագիր, Հայաստան . . . 12

**4. Կանանց իրավունքները պաշտպանող միջազգային գործիքներն ու մեխանիզմները . . . 14**

4.1 Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (CEDAW) . . . 14

4.2 Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (1952 թ.) . 14

4.3 Աշխատանքի միջազգային կազմակերպության Կոնվենցիաները . . . 15

4.4 ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակները, 2000թ. . . . 15

4.5 Կանանց հարցերով 4րդ միջազգային համաժողովի կողմից ընդունված Պեկինյան հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը (1995թ.) . . . 16

4.6 ԱՌՆ վերաբերյալ Հյոգոյի գործողությունների ծրագիրը . . . 16

4.7 ՄԱԶԾ 8 Կետ օրակարգը ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման ժամանակ կանանց հզորացման և գենդերային հավասարության համար . 17

**5. Կանանց խոցելիությունը աղետների ժամանակ . . . 18**

**6. Եզրակացություններ կանանց համար . . . 21**

**7. Տղամարդիկ աղետների ժամանակ որպես գենդերային հավասարության գործակալներ . . . 23**

**8. Կառավարության քաղաքականությունը Աղետների Ռիսկերի Նվազեցման ժամանակ . . . 24**

**9. Գենդերային-զգայուն ռիսկերի գնահատում . . . 26**

**Օգտագործված գրականություն . . . 27**

## Հապավումների ցանկ

| | | |
|---|---|---|
| ՄԱԿ | - | Միավորված ազգերի կազմակերպություն |
| ՄԱԶԾ | - | ՄԱԿ-ի զարգացման ծրագիր |
| ԲՊՄՄ | - | Բնության Պահպանման Միջազգային Միություն |
| ԱՌՆ | - | աղետների ռիսկի նվազեցում |
| ՄԱԿ/ԱՆՄՌ | - | ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն |
| ԱՄԿ | - | Աշխատանքի միջազգային կազմակերպություն |
| ՀԶՆ | - | Հազարամյակի զարգացման նպատակներ |
| ՀԳԾ | - | Հյոգոյի գործողությունների ծրագիր |

Գենդերային հավասարությունն ինքնանպատակ չէ: Այն աղքատության հաղթահարման, կայուն զարգացման և պատշաճ կառավարման խնդիրները լուծելու նախապայման է:

Քոֆի Անան

ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղար

## 1. Գենդեր հասկացությունը

**Գենդերը** սոցիալական հասկացություն է: Գենդերը կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների մի համակարգ է՝ հիմնված համապատասխանաբար կանանց և տղամարդկանց համար կառուցված սոցիալական դերերով և վարքագծով: Ավելի պարզ ասած գենդերը անդրադառնում է կանանց և տղամարդկանց միջև հարաբերություններին՝ կոնկրետ հասարակության ներքո և ժամանակահատվածի ընթացքում: Այն հաճախ բնորոշվում է կանանց և տղամարդկանց սոցիալական տարբերություններով և հարաբերություններով, հիմնված տվյալ հասարակության մեջ ընդունված տղամարդուն կամ կնոջը տիպիկ վարքագծով:

**Սեռը** արտացոլում է տղամարդկանց և կանանց կենսաբանական տարբերությունները, որոնք համընդհանուր բնույթ ունեն, անփոփոխ են և տրված են բնության կողմից:

### 1.1 Գենդերային դերեր

Գենդերային դերերը սոցիալական դերեր են: Տղաներին և աղջիկներին միստեմաշիկ կերպով սովորեցնում են տարբերվել միմյանցից: Գենդերային դերերի ներքո սոցիալականացումն սկսվում է դեռևս վաղ կյանքից: Տարբերվել սովորում են արտաքին տեսք և հագուստի, գործելակերպի վարքագծի, պարտականությունների, զգացմունքների, ինտելեկտուալ նկրտումների և այլնի առումով:

### 1.2 Գենդերային խտրականություն

**Գենդերային խտրականությունը** վերաբերում է այն բոլոր տարբերություններին, բացառություններին կամ սահմանափակումներին, որոնք հիմնված են հասարակության ներքո գենդերային դերերի և նորմերի հիման վրա, որոնք խանգարում են անհատին լիարժեքորեն օգտվել մարդու իրավունքներից: Աշխարհի շատ զարգացող երկրներում ի տարբերություն տղամարդկանց, կանայք շարունակում են ունենալ ավելի քիչ իրավունքներ, ցածր կրթություն և առողջական կարգավիճակ, ցածր եկամուտ, սեփականության ձեռքբերման համար սակավ հնարավորություններ և որոշումների կայացման գործընթացների մեջ ցածր մասնակցություն:

## 1.3 Գենդերային հավասարություն

**Գենդերային հավասարությունը** կանանց և տղամարդկանց միջև հավասարությունն է, և կոչ է անում սասարել կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում: Հավասարությունը կանանց և աղջիկների իրավունքների կիրարկման հնարավորությունն է, այն կոչված է նվազեցնել կանանց և տղամարդկանց միջոցների և եկամուտների անհավասարությունը:

**Գենդերային հավասարությունը մարդու իրավունքների հիմքն է և հանդիսանում է սոցիալական արդարության պայման:** Այն հիմնային նախադրյալ է նաև հավասարության, զարգացման և խաղաղության համար:

Կանանց և տղամարդկանց միջև հավասար համագործակցությունը մարդկային կայուն զարգացման նախապայմանն է:

Միջազգային համայնքը կարևոր պարտավորություններ է ընդունել կանանց իրավունքների և կանանց և տղամարդկանց միջև հավասարության վերաբերյալ, ներառյալ՝

- ✓ «Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացում» կոնվենցիա.
- ✓ Պեկինի Գործողությունների Պլատֆորմ.
- ✓ Հազարամյակի Զարգացման Նպատակներ.
- ✓ Միացյալ Ազգերի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված N1325 որոշումը՝ կանանց, խաղաղության և անվտանգության վերաբերյալ:

Գենդերային հավասարության հիմնական սկզբունքն է՝ ստեղծել հավասար պայմաններ կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների համար:

## 1.4 Գենդերային բռնություն

Կանանց նկատմամբ բռնությունը կանանց հիմնական իրավունքների և **ազատությունների ոտնահարում է,** որը սահմանափակում կամ զրկում է կանանց այդ իրավունքներից և ազատություններից օգտվելու հնարավորությունից:

Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին ՄԱԿ-ի Հռչակագրի համաձայն **«կանանց նկատմամբ բռնությունը» սահմանվում է որպես գենդերային բռնության ցանկացած դրսևորում,** որը բերում է կամ կարող է բերել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնասի կամ տառապանքի, այդ թվում՝ բռնության սպառնալիքի և հարկադրանքի կերպով կնոջ ազատությունը սահմանափակելը՝ թե հանրային և թե անձնական կյանքում:

Աշխարհի բոլոր հասարակություններում կանայք և աղջիկները ենթարկվում են ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունների: Բռնության խնդիրը չի ճանաչում որևէ մշակութային, սոցիալական, դասակարգային, տնտեսական կամ կրոնական

սահմաններ: Ելնելով գենդերային բռնության խնդրի համաշխարհային բնույթից՝ այն դարձել է բոլոր պետությունների մտահոգության առարկա:

## 2. Գենդերը և Աղետների ռիսկերի նվազեցումը

Աղետների ռիսկերի նվազեցումը աղետների բացահայտման, նվազեցման և գնահատման համակարգված մոտեցում է: Այն նպատակաուղղված է աղետների սոցիալ-տնտեսական, ինչպես նաև բնական աղետների ռիսկերի խոցելիության նվազեցմանը:

ԱՌՆ-ն և գենդերը երկու խաչաձև զարգացող հիմնահարցեր են:

Աղետների ռիսկերի նվազեցման գործընթացում գենդերային ուղղորդումը հնարավորություն է տալիս տարբեր տեսանկյուններից պարզաբանել հասարակության մեջ գենդերային հարաբերությունները և հզորացնել գենդերային հավասարությունը սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Ակնհայտ է, որ աղքատության մեջ ապրող մարդիկ ավելի խոցելի են աղետների հանդեպ և աշխարհում աղքատների մեծ մասը (70%) կանայք են:

Ապացուցված է, որ կանայք ավելի շատ են տուժում մեծ և փոքր աղետներից՝ ավելի բարձր խոցելիության հետևանքով, չնայած որ չկան պարբերական գենդերային-զգայուն վիճակագրական տվյալներ: Անհրաժեշտ է, որ «գենդերային սոցիալական համակարգերը» ընդգրկվեն «գենդերային աղետների կառավարման ծրագրերում»: Անհրաժեշտ է, որ այս փաստերն այլևս չանտեսվեն, քանի որ մենք նպատակ ունենք կատարելագործել արդյունավետությունը, որի միջոցով մենք կիակազդենք արտակարգ իրավիճակներին ու աղետներին և կնախապատրաստվենք դրանց դեմ: Գենդերային վերլուծությունները չեն հաստատում, որ բոլոր կանայք ավելի խոցելի են տղամարդկանց համեմատ, բայց գենդերը կարևոր է, չնայած որ խոցելիությունը միայն դրանով չի որոշվում: Խոցելիության գնահատումը նույնպես ներառում է հակազդման ռազմավարությունը՝ ուղղված այն մարդկանց, որոնք գտնվում են աղետի գոտում: Ուսումնասիրությունները փաստում են, որ գենդերային գործոնը և հարաբերությունները սահմանափակող դեր են կատարում կանանց սոցիալական, տնտեսական և քաղաքական դաշտում՝ սակավ և զգալիորեն սահմանափակ հնարավորությունների պատճառով: Դա նաև ազդում է կանանց աղետներին նախապատրաստվելու, դիմակայելու, արձագանքելու, գոյատևելու և վերականգնողական գործընթացում ներգրավվելու հնարավորությունների վրա:

Առկա սոցիալ-տնտեսական պայմանները ցույց են տալիս, որ աղետները կարող են տարբեր ազդեցություններ ունենալ նույնիսկ դեմոգրաֆիայի առումով միանման համայնքներում, բայց առավել խոցելի խմբերը անխուսափելիորեն ավելի շատ են տուժում աղետների ժամանակ: Հետազոտությունները ցույց են տվել, որ աղետներն ավելի են խորացնում գենդերային անհավասարությունը՝ ավելի վատթար պայմաններ ստեղծելով կանանց համար:

Մեր հիմնարար նպատակն է նպաստել կանանց և տղամարդկանց համար աղետների հանդեպ դիմակայուն միջավայրի ստեղծմանը՝ կայուն զարգացման միջավայր ապահովվելու համար:

- ✓ Մեծացնել աղետների ռիսկերի նվազեցման ներքո գենդերային կարիքների և պահանջների ըմբռնումը:
- ✓ Զարգացնել կառավարության կարողությունները, որոնք ուղղված են աղետների ռիսկերի նվազեցման ներքո գենդերային հիմնախնդիրներին:
- ✓ Խրախուսել կառավարություններին կայուն զարգացման միջավայր ապահովելու համար ուղղորդել գենդերային հեռանկարները աղետների ռիսկերի նվազեցման օրենսդրության, ծրագրերի և քաղաքականության մեջ:

Բնության Պահպանման Միջազգային Միությունը (IUCN), ՄԱԶԾ-ն և ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարությունը (UNISDR) համաստեղ աշխատում են, որպեսզի ուղղորդեն գենդերային հիմնախնդիրները աղետների ռիսկերի նվազեցման գործընթացում:

IUCN կարծիքով կլիմայի զգալի փոփոխությունների հետևանքով առաջացող աղետները հասկապես մեծ խնդիրներ են առաջացնում կանանց համար: Իսկ ճգնաժամի կանխարգելման և վերականգնման ներքո կանանց հզորացման և գենդերային հավասարության վերաբերյալ ՄԱԶԾ-ի 8 կետի օրակարգը նշում է աղետների ռիսկերի նվազեցման նախաձեռնությունների մեջ գենդերային հավասարության անհրաժեշտությունը:

Գենդերային հավասարությունը ԱՌՆ-ի ներքո չի վերաբերվում միայն կանանց հիմնախնդիրներին:

Այն հասցեագրվում է և՛ կանանց և՛ տղամարդկանց հիմնախնդիրներին, նրանց միջև հարաբերություններին և նրանց միջև անհավասարության դրսևորումներին:

## 3. Կանանց կարգավիճակը Հայաստանում

Հայաստանում աղքատությունը երկրի կարևոր խնդիրներից մեկն է: Հանրապետության տարբեր տարածքներում գտնվող շատ գործարաններ և արդյունաբերական հիմնարկներ, որոնք տեղական բնակչության համար հանդիսանում էին եկամտի հիմնական աղբյուր, 1990-ական թվականների սկզբին դադարեցրին իրենց գործունեությունը և փակվեցին: Գործազրկությունը հասկապես տարածված է գյուղական շրջաններում և հասկապես կանանց շրջանում: Հայաստանում կանանց գործազրկության թիվը հասնում է 75.5 %-ի:

Ըստ պաշտոնական տվյալների՝ կանայք ավելի երկար են աշխատանք փնտրում, իսկ ընդհանուր աշխատանք փնտրողների 65%-ը կին է, որոնցից 64.0%-ը փնտրում է աշխատանք ավելի քան 12 ամիս, մինչդեռ այդ ցուցիչները տղամարդկանց համար 35.1% և 33.3% են կազմում: Հայաստանում շատ կանայք չեն ստանում մայրության նպաստ, քանի որ նրանք չեն աշխատում: Օրինակ՝ ՀՀ պետական նպաստների վերաբերյալ օրենքը սահմանում է նպաստ միայն մինչև երկու տարեկան երեխաներ ունեցող աշխատող կանանց համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական ճյուղերից մեկը համարվում է գյուղատնտեսությունը, որտեղ ըստ 2001թ. տվյալների ներգրավված է բնակչության 45.1 %-ը: Այդ թվաքանակի կեսը կազմում են կանայք, որը բացասաբար է անդրադառնում նրանց վերարտադրողական առողջության վրա:

Թեպետ Հայաստանի սահմանադրությունը հաստատում է հավասար պայմաններ կանանց և տղամարդկանց համար, սակայն կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքում շատ ցածր է: Ըստ 2010թ. տվյալների Հայաստանի խորհրդարանում 131 պատգամավորներից միայն 12-ն են կին, իսկ նախարարներից միայն երկուսն են կին: Կանանց մասնակցության մակարդակը տեղական իշխանություններում ևս շատ ցածր է:

Հայաստանում տարածված է կանանց նկատմամբ բռնությունը:

Յուրաքանչյուր տարի Հայաստանը մասնակցում է «գենդերային հավասարության դեմ» 16-օրյա քարոզարշավին, իսկ 2007թ-ից միացել է Եվրոպական Խորհրդի քարոզարշավին:

Ըստ վիճակագրական տվյալների, 1998թ. Հայաստանում կանանց 48%-ը ենթարկվել է ֆիզիկական բռնության և նրանցից 20%-ը ենթարկվել է սեռական բռնության:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի 2010թ. մարտի 30-ի N 213-Ա որոշմամբ Հայաստանում հաստատվեց գենդերային բռնության դեմ պայքարի խորհուրդը: Խորհրդի նպատակն է նպաստել գենդերային բռնության կանխարգելմանը, տեղեկատվական համակարգերի մշակմանը և «Գենդերային բռնության դեմ» Ազգային Ծրագրի զարգացմանը:

## 3.1 Գենդերային ռազմավարության հայեցակարգ, Հայաստան

Գենդերային ռազմավարության հայեցակարգը ընդունվել է 2010թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարության կողմից: Այն սահմանում է կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները ու ընդհանուր ռազմավարությունը, և ուղղված է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ անկախ սեռից:

Հայեցակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ձևավորման նախադրյալը գենդերային հավասարությունն է՝ որպես ժողովրդավարական գերակա արժեք, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման: Հայեցակարգը կծառայի հիմք գենդերային հավասարության մշակման պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ քաղաքացիական-հասարակական ինստիտուտների նախաձեռնությունների կողմից:

Գենդերային քաղաքականությունն իրականացվելու է թե՛ հասարակական-քաղաքական

կյանքի բոլոր ոլորտներում գենդերային չափման ներառման միջոցով, և թե՛ գենդերային անհավասարակշռության հաղթահարման և կանանց հնարավորությունների ընդլայնման նպատակով հասուկ ծրագրերի և միջոցների մշակմամբ, և պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա,

- ✓ ***համապատասխանություն***՝ ՀՀ Սահմանադրության հիմնական դրույթներին և երկրի միջազգային պարտավորություններին,
- ✓ ***ժողովրդավարացում***՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,
- ✓ ***հարգանք***՝ անձի հիմնարար իրավունքների և ազատությունների նկատմամբ և նրա ազատ ու ստեղծագործական զարգացման ու առավելագույն ինքնադրսևորման աջակցություն,
- ✓ ***հրապարակայնություն***՝ որոշումների բաց, թափանցիկ և հրապարակային մշակում, քննարկում և ընդունում,
- ✓ կանանց և տղամարդկանց հռչակված իրավունքներից իրապես օգտվելու հնարավորությունների **ընդլայնում,**
- ✓ ճշմարիտ իրավահավասարության և զուգակշռված ժողովրդավարության կայացման **ապահովում**,
- ✓ քաղաքացիների ազգային և **անձնական** շահերի **ներդաշնակեցում**՝ անկախ նրանց սեռային պատկանելությունից,
- ✓ ***սոցիալական գործընկերության կայացում*** *պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև,*
- ✓ պետական գենդերային քաղաքականության **շարունակականություն**,
- ✓ ազգային և միջազգային փորձի ուսումնասիրում և ներդրում՝ ըստ անհրաժեշտության:

## 3.2 ՄԱԶԾ և «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» երկրորդ փուլի ծրագիր, Հայաստան

ՄԱԶԾ «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» երկրորդ փուլի ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում աղետների ռիսկերի կառավարման օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակների հզորացմանը, աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության մշակմանը, աղետների ռիսկերի գնահատմանը և մոնիտորինգի համակարգին՝ ազգային ռիսկերի գնահատման և աղետների վիճակագրության տվյալների ստեղծման միջոցով:

Ծրագրի գործողություններն են՝

1. Ազգային ռիսկերի գնահատում և աղետների վերաբերյալ վիճակագրական

տվյալների ստեղծում:

2. Իրավական և ինստիտուցիոնալ դաշտի հզորացում և Հայաստանում աղետների ռիսկերի կառավարման գործակալությունների հետ համագործակցություն:

Ծրագիրն աջակցում է Հայաստանում աղետների ռիսկերի կառավարման համար իրավական և ինստիտուցիոնալ դաշտի հզորացմանը, աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի ստեղծմանը, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության մշակմանը: Ծրագրի կարևորագույն ակնկալվող արդյունքներից է ռազմավարության մշակման համար ռիսկերի բացահայտման, գնահատման և մոնիտորինգի աշխատանքների իրականացումը:

Ծրագրի իրականացման հիմնական գործընկերներն են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը և տարածքային կառավարման նախարարությունը:

Ծրագրի գործողությունների մեջ գենդերային զգայուն մոտեցում ապահովելու համար ՄԱԶԾ-ն ծրագրի մեջ ընդգրկել է միջազգային և տեղական գենդերային փորձագետներ՝ ԱՌՆ-ում գենդերային կարիքների գնահատման, աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների ներքո գենդերային զգայունության ներդրման, ԱՌՆ վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության ապահովման, կանանց կարողությունների հզորացման և աղետների դեմ պայքարելու պատրաստվածության և արձագանքման հմտությունների զարգացման նպատակով: Գնահատվել են նաև ԱՌՆ ժամանակ կանանց և տղամարդկանց խոցելիության աստիճանը:

Աղետների ռիսկերի նվազեցման ժամանակ գենդերային բաղադրիչի կատարելագործման համար առաջարկվում է հետևյալ քայլերի նախաձեռնումը՝

- ✓ Ռիսկերի, խոցելիության և կարողությունների գնահատման վերաբերյալ համապատասխան տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, ինչպես նաև կարողությունների հզորացման նախաձեռնությունները հաշվի չեն առնում գենդերային հիմնահարցերը: Անհրաժեշտ է հավասարապես հաշվի առնել կանանց և տղամարդկանց կարիքները, գենդերային դերերը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, մշակութային արժեքները և այլ գործոններ:
- ✓ Աղենների ռիսկերի նվազեցման վերաբերյալ աշխատաժողովներին և քննարկումներին կանանց մասնակցությունը:
- ✓ Որոշումների կայացման գործընթացների մեջ կանանց ցածր մասնակցությունը:

Աղետների ռիսկերի նվազեցման գործողությունների ներքո գենդերային զգայուն քաղաքականությունների ներդրման ամենակարևոր պայմաններից մեկը կանանց մասնակցության և ներգրավվածության խրախուսումն է որոշումների կայացման համակարգում և պաշտոններում:

## 4. Կանանց իրավունքները պաշտպանող միջազգային գործիքներն ու մեխանիզմները

Կանանց իրավահավասարությունը Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներից է: ՄԱԿ-ի Կանոնադրությունը որպես հիմնական նպատակ նշում է` «վերահաստատել հավատը մարդու հիմնարար իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ հավասար իրավունքների նկատմամբ»: Կանանց իրավահավասարության վերաբերյալ ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթներն իրենց զարգացումը գտան մարդու իրավունքների վերաբերյալ բազում միջազգային փաստաթղթերում:

### 4.1 Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (CEDAW)

Ընդունվել է 1979թ. և կանանց իրավունքների վերաբերյալ առավել ընդգրկուն միջազգային իրավական փաստաթուղթ է համարվում: Կոնվենցիան մասնանշում է բազմաթիվ ոլորտներ, որտեղ կանանց նկատմամբ խտրականությունն առավել ցայտուն դրսևորումներ է ունեցել` օրինակ, քաղաքական իրավունքները, ամուսնությունը, ընտանիքը և զբաղվածությունը: Կոնվենցիան սահմանում է հստակ նպատակներ և միջոցներ, որոնց իրագործմամբ կստեղծվի այնպիսի միջազգային հասարակարգ, որտեղ կանայք կօգտվեն տղամարդկանց հետ հավասար իրավունքներից:

2000թ. դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտավ Կոնվենցիայի ֆակուլտատիվ արձանագրությունը: Արձանագրությունը պարտավորեց Կանանց դեմ խտրականության վերացման հանձնաժողովին ընդունել անհատական կամ խմբակային բողոքներ այն կանանցից, որոնք սպառել են իրենց երկրում դատական կարգով իրենց խնդիրները լուծելու հնարավորությունը: Արձանագրությունը նաև իրավունք է տալիս հանձնաժողովին քննել Կոնվենցիայի դրույթները կոպիտ կամ շարունակական կերպով խախտելու դեպքերը: Այս գործողությունները, սակայն, կարող են իրականացվել միայն Արձանագրությունը վավերացրած պետություններում:

### 4.2 Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան (1952 թ.)

Ամրագրում է հասարակության քաղաքական կյանքում տղամարդկանց հետ հավասար կանանց մասնակցության իրավունքը, ներառյալ ընտրովի պաշտոններում ընտրվելու, պաշտոնավարելու և պետական կառավարման գործառույթներ իրականացնելու իրավունքը:

### 4.3 Աշխատանքի միջազգային կազմակերպության Կոնվենցիաները

Ընդգրկում են սոցիալական և աշխատանքային հարցերի լայն շրջանակ, ներառյալ մարդու հիմնական իրավունքները, նվազագույն աշխատավարձը, արտադրական հարաբերությունները, զբաղվածության քաղաքականությունը և սոցիալական երկխոսությունը: Այս հարցերի թվին են դասվում նաև մի շարք գենդերային բնույթի խնդիրներ:

Հաճախ օգտագործվում է այն փաստարկը, որ կանանց նկատմամբ պաշտպանողական միջոցառումների իրականացումը կարող է բացասաբար անդրադառնալ հենց իրենց՝ կանանց վրա, զրկելով իրենց որոշակի աշխատանքներ ձեռք բերելու հնարավորությունից: Մայրության հետ կապված արտոնությունները բարձրացնում են կանանց աշխատանքի ընդունելու հետ կապված ծախսերը և, հետևաբար, կարող են ետ պահել գործատուներին կանանց աշխատանքի ընդունելուց: Սակայն մայրության պաշտպանության դեպքում, այս միջոցառումներն անհրաժեշտ են կնոջ վերարտադրողական դերի պաշտպանության առումով: Ահա թե ինչու Մայրության պաշտպանության մասին վերանայված Կոնվենցիան շեշտադրում է սոցիալական ապահովության միջոցներից մայրության նպաստների վճարման անհրաժեշտությունը և սահմանափակում այն հանգամանքները, որոնց դեպքում գործատուները ստիպված են վճարել այդ նպաստները իրենց սեփական միջոցներից (Կոնվենցիա 183, հոդված 6):

Ստորև բերված է գենդերային հարցերով Կոնվենցիաների ոչ սպառիչ ցանկը.

- ✓ Մայրության պաշտպանության մասին Կոնվենցիա
- ✓ Կանանց գիշերային աշխատանքի մասին Կոնվենցիա
- ✓ Հավասար վարձատրության մասին Կոնվենցիա
- ✓ Խտրականության (աշխատանքի և զբաղմունքների բնագավառ) մասին Կոնվենցիա
- ✓ Ընտանեկան պարտականություններ ունեցող աշխատողների մասին Կոնվենցիա
- ✓ Կես դրույքով աշխատանքի մասին Կոնվենցիա
- ✓ Տնայնագործ աշխատանքի մասին Կոնվենցիա

### 4.4 ՄԱԿ-ի Հազարամյակի զարգացման նպատակները, 2000թ.

ՀԶՆ-ն ներառում են 8 փոխկապակցված նպատակներ և 18 ժամկետային նպատակակետեր, որոնց իրագործման պարագայում աշխարհի առավել աղքատ բնակչությունը հնարավորություն կստանա օգտվել գլոբալիզացման առավելություններից: Նպատակների իրականացման շրջանակներում ջանքեր են գործադրվում զարգացող պետությունների առաջ ծառացած առավել լուրջ հարցերի լուծման միջոցով մինչև 2015 թ. իրական առաջընթացը խթանելու ուղղությամբ:

Հազարամյակի զարգացման նպատակներից երրորդն ուղղված է գենդերային հավասարության խթանմանը և կանանց հզորացմանը: Այս նպատակի առկայությունն իսկ վկայում է այն մասին, որ միջազգային հանրությունն ընդունել է զարգացման առումով գենդերային հավասարության և կանանց դերի բարձրացման կարևորությունը: Հազարամյակի զարգացման երրորդ նպատակը ներհյուսված է բոլոր 8 նպատակներին, քանի որ գենդերային անհավասարությունը մեծապես խոչընդոտում է մնացյալ նպատակների իրականացմանը: Գործնականում, այս նպատակների իրագործումն անհնար է առանց կարողությունների և հնարավորությունների առումով կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը վերացնելու:

## 4.5 Կանանց հարցերով 4րդ միջազգային համաժողովի կողմից ընդունված Պեկինյան հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը (1995թ.)

Գործողությունների ծրագիրը կանանց դերի բարձրացման օրակարգային փաստաթուղթ է, որը նպատակ ունի վերացնել տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական ասպարեզներում որոշումների կայացմանը մասնակցելու միջոցով հանրային և մասնավոր կյանքում կանանց լիարժեք մասնակցությունը խոչընդոտող բոլոր գործոնները: Սա նշանակում է, որ կանանց և տղամարդկանց միջև պետք է համաստեղ իշխանության և պարտականությունների սկզբունք սահմանվի, որը կգործի ընտանիքում, աշխատավայրում, ներպետական ու միջազգային համատեքստում:

## 4.6 ԱՌՆ վերաբերյալ Հյոգոյի գործողությունների ծրագիրը

Աղետների վնասը սպառնում է ամբողջ աշխարհին: Այդ պատճառով անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռնարկել աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ: Հասկանալով այդ միջոցների անհրաժեշտությունը՝ մշակվել է Հյոգոյի գործողությունների ծրագիրը 2005-2015թթ  համար:

ՀԳԾ-ն ընդունվել է 2005թ հունվարին՝ աղետների կանխարգելման համաշխարհային կոնֆերանսի ժամանակ:

Այն նշում է, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետք է ընդգրկվի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ: Վերջինս առաջնորդվում է գործողությունների  իրականացման հինգ առաջնահերթ գործընթացներով, որոնց մեջ պետք է ընդգրկվեն գենդերային հեռանկարները և ԱՌՆ-ն.

- ✓ Երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական և տեղական նշանակության  առաջնահերթություն է և գտնվում է ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա:
- ✓ Բացահայտել, գնահատել և վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաև հզո-

րացնել վաղ ազդարարման համակարգը:

- ✓ Օգտագործել գիտելիքը, նորամուծությունը և կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության և դիմակայման մշակույթ ձևավորելու համար:
- ✓ Նվազեցնել հիմնային ռիսկի գործոնները:
- ✓ Բարձրացնել աղետներին արդյունավետ արձագանքման պատրաստականությունը բոլոր մակարդակներում:

Գենդերային հեռանկարները պետք է ներառվեն բոլոր այս գործընթացների մեջ, որպեսզի աղետների ռիսկերի նվազեցման քաղաքականությունները և ծրագրերը լինեն գենդերային զգայուն: Այս գաղափարը Հյոգոյի գործողությունների ծրագրի մեջ նշվում է որպես կարևոր նախապայման՝ աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ տարվող գործողությունների արդյունավետության համար:

- ✓ Քաղաքական գործընթացը նշում է ազգային իշխանությունների կողմից ԱՌՆ-ի համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը:
- ✓ Տեխնիկական գործընթացը նշում է ԱՌՆ-ի մեջ տեխնոլոգիաների և գիտության կարևոր դերը:
- ✓ Սոցիալ-կրթական գործընթացն ուղղված է ԱՌՆ-ի ժամանակ հասարակության գիտելիքների և հմտությունների մակարդակի ավելացման կարևորությանը:
- ✓ Զարգացման գործընթացը նշում է զարգացման գործընթացների մեջ ԱՌՆ-ի ընդգրկման կարևորությունը և անհրաժեշտությունը:
- ✓ Մարդասիրական գործընթացն ընդգծում է ԱՌՆ-ի նկատմամբ պատրաստվածության և արդյունավետ օժանդակության կարևորությունը:

Հյոգոյի գործողությունների ծրագիրը նաև պնդում է, որ գենդերային հիմնահարցերը պետք է ինտեգրվեն ԱՌՆ-ի բոլոր քաղաքականությունների, պլանների և որոշումների կայացման գործընթացների մեջ, ներառյալ ռիսկերի գնահատումը, արագ արձագանքումը, տեղեկատվության կառավարումը, կրթությունը և ուսուցումը:

### 4.7 ՄԱԶԾ 8 Կետ օրակարգը ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման ժամանակ կանանց հզորացման և գենդերային հավասարության համար

ՄԱԶԾ-ն ճանաչում է գենդերային հավասարությունը որպես մարդու զարգացման համար հիմնական նպատակ և այն աջակցում է գենդերային ուղղորդման միջոցով: Ճգնաժամերի Կանխարգելման և Վերականգնման Բյուրոն առաջնորդվում է ՄԱԶԾ-ի ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման ժամանակ կանանց հզորացման և գենդերային հավասարության համար 8 Կետ օրակարգով:

Օրակարգի նպատակն է՝

- ✓ Հզորացնել կանանց անվտանգությունը ճգնաժամերի ժամանակ: Դադարեցնել կանանց դեմ բռնությունները:
- ✓ Գենդերային արդարություն: Կանանց արդարության և անվտանգության համար միջոցների ձեռնարկում:
- ✓ Ընդարձակել կանանց քաղաքացիությունը, մասնակցությունը և առաջնորդությունը: Կանանց ընդունել որպես որոշում կայացնողներ:
- ✓ Խաղաղության ստեղծում կանանց հետ և կանանց համար: Ներառել կանանց խաղաղության և վերականգնման բոլոր գործընթացների և բանակցությունների մեջ:
- ✓ Նպաստել գենդերային հավասարությունը աղետների ռիսկերի նվազեցման ներ-քո և աջակցել կանանց և տղամարդկանց համատեղ գործունեությանը:
- ✓ Նպաստել գենդերային-արձագանքման վերականգնմանը: Աջակցել վերականգ-նողական գործողությունների մեջ կանանց առաջնորդությանը:
- ✓ Կառավարությունը պետք է ազգային օրակարգի մեջ ներառի կանանց հիմնա-հարցերը:
- ✓ Հզորացնել կարողությունները սոցիալական փոփոխությունների համար: Հա-սարակության վերափոխման համար աշխատել միասին:

## 5. Կանանց խոցելիությունը աղետների ժամանակ

Բոլորը հավասարապես կարող են տուժել աղետներից, սակայն կանայք և տղամարդիկ ունեն խոցելության տարբեր աստիճաններ:

Խոցելիությունը ցանկացած մարդու համար կորուստների և/կամ հնարավոր վնասների (ֆիզիկական, մտավոր, հոգեբանական, սոցիալական, և կենսաբանական) հանդեպ եղած անպատրաստվածություն ու զգայունություն է: Խոցելիության հիմնական ցուցիչ-ներն են՝ սեփականության, սոցիալական ռեսուրսների կորուստը, սոցիալական մեկու-սացումը, ֆիզիկական և հոգեբանական տառապանքը:

Ովքեր են խոցելի աղետների հանդեպ.

- ✓ Աղքատ և ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները:
- ✓ Միայնակ ծնող ունեցող ընտանիքները:
- ✓ Սոցիալապես մեկուսացված ընտանիքները:
- ✓ Քաղաքացիություն նոր ստացած մարդիկ, էմիգրանտները, օտարերկրացիները:
- ✓ Տարեց քաղաքացիները, երեխաները և երիտասարդները:
- ✓ Հիվանդ կամ մտավոր և ֆիզիկական թերություններ ունեցող մարդիկ

- ✓ Անօրինական փաղափացիները, փախստականները և ղաստրազմի վեստրանները:
- ✓ Տեղական բնակչությունը և բնակչության անապահով խավը:
- ✓ Անօթևան փաղափացիները:
- ✓ Կանայք:

141 երկրներում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ բնական աղետներից ավելի շատ տուժում են կանայք՝ քան տղամարդիկ, որի պատճառը կանանց անհավասար սոցիալ-տնտեսական կարգավիճակն է:

Այն երկրներում, որտեղ կանանց սոցիալ-տնտեսական կարգավիճակը բարձր է, կանայք և տղամարդիկ բնական աղետների ժամանակ տուժում են հավասարապես, կանանց ցածր սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցող երկրներում կանայք ավելի շատ են տուժում բնական աղետներից:

Աչխատանքային գործունեության տարբեր բնագավառներ կանանց և տղամարդկանց համար առաջացնում են վտանգների տարբեր աստիճաններ

- ✓ Կանայք ավելի շատ են ենթարկվում «ներքին» աղետների՝ նրանց առավել շատ տնային գործունեության մեջ ներգրավված լինելու պատճառով, օրինակ՝ գազօջախի ծուխը, ջրհեղեղի հետևանքով առաջացած տիղմը, տասանումների ենթակա էլեկտրականությունը, աղտոտված ջուրը և այլն:
- ✓ Գյուղի կանայք, որոնք ավելի շատ են զբաղվում փայտի և ջրի հայթայթմամբ, ավելի հաճախ են ենթարկվում երաշտների, անտառահատման, աղտոտման և այլ բնապահպանական և կլիմայի փոփոխության բացասական ազդեցությանը:
- ✓ Շատ կանայք կրկնակի թունավորման են ենթարկվում օդի ու ջրի աղտոտման պատճառով և տառապում են հիվանդություններով, ինչպես նաև դրսում շինարարության և հանքարդյունաբերության վնասակար թափոնների ազդեցության զոհ են դառնում:

Կենցաղային պայմաններն ու անհավասարությունները նույնպես ավելացնում են կանանց անպաշտպանությունը և զգայունությունը տարբեր տեսակի աղետների նկատմամբ

- ✓ Անապահով տնտեսական կարգավիճակը կանանց համար ավելի դժվար է դարձնում տարբեր սարքվորումների գնումը՝ ինչպիսին են օրինակ երեխաների համար դեղորայքի գնումը կամ սաստիկ շոգից փրկող օդափոխիչների ձեռքբերումը:
- ✓ Խրոնիկական ու սրտիֆային հիվանդություններ և ֆիզիկական, մտավոր խնդիրներ ունեցող կանայք ավելի հաճախ են ենթարկվում վտանգների՝ ֆիչ շարժունակության պատճառով:
- ✓ Վատ առողջական պայմանները և սնուցումը ևս թույլ չեն տալիս կանանց համապատասխանաբար դիմադրել աղետներին:

- ✓ Հղիությունը և կանանց վերարտադրողական առողջության գործոնները նվազեցնում են կանանց դիմադրողականությունը գյուղատնտեսական, արդյունաբերական վնասակար արտադրանքի, սննդի աղտոտվածության, թունավոր գազերի և ճառագայթման նկատմամբ: Տղամարդկանց վերարտադրողական առողջությունը նույնպես ենթարկվում է այս վտանգներին

Ավելի շատ կանայք, քան տղամարդիկ են տառապում ֆիզիկական կամ մտավոր հիվանդություններով, որոնք սահմանափակում են նրանց ամենօրյա գործողությունները

- ✓ Կանայք տղամարդկանց համեմատ ավելի երկար են ապրում և ավելի շատ առողջական խնդիրներ են ունենում:
- ✓ Մտավոր հիվանդությունների դեպքերը ավելի մեծ են կանանց շրջանում, օրինակ՝դեպրեսիան:
- ✓ Խրոնիկական հիվանդությունները, ինչպիսիք են ասթման և շաքարային դիաբետը ավելի շատ են լինում կանանց մոտ:
- ✓ Կանայք ավելի շատ են կաթվածների ենթարկվում՝ անկանոն բուժման պատճառով:
- ✓ Կանանց հղիության վերջին ամիսները ևս սահմանափակում են կանանց շարժունակությունը:
- ✓ Գենդերային բռնությունները կարող են ևս թողնել մշտական վերքեր և թուլացնում են կանանց դիմադրողական պոտենցիալը՝ թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես:

Փոխազդվող գենդերային դինամիկան մեծացնում է հաշմանդամ կանանց անկարողությունը և նվազեցնում է ծառայությունները, որոնք օգնում են կանանց հնարավորին չափ անկախ ապրելակերպին

- ✓ Աղքատության մակարդակը ավելի բարձր է հաշմանդամ կանանց շրջանում աշխատանքային ոլորտում խտրականության և սոցիալական ցածր պաշտպանվածության պատճառով:
- ✓ Աշխատող հաշմանդամ կանանց թիվը կազմում է գործազուրկ տղամարդկանց թվի կեսը: Հաշմանդամ կանայք ավելի շատ են կախված պետական օժանդակություն տրամադրող սոցիալական կազմակերպություններից:
- ✓ Հաշմանդամ կանայք երկու անգամ ավելի շատ են ենթարկվում ընտանեկան բռնության:
- ✓ Հաշմանդամ տղաները ավելի հաճախ են ամուսնանում, քան հաշմանդամ աղջիկները և ամուսնալուծության թիվը ավելի մեծ է հաշմանդամ կանանց մոտ:
- ✓ Աշխարհում 10 հաշմանդամից
- ✓ 8-ը ապրում է հարավային շրջաններում և վերջիններիցս կանանց միայն 1%-ն է կրթված:

Աղետների ժամանակ ավելի հաճախ հաշմանդամ են դառնում կանայք և աղջիկները, որոնք բախվում են այլ խոչընդոտների

✓ Ինչպես տղամարդիկ, այնպես էլ կանայք աղետներից դառնում են հաշմանդամ, որը հաճախ դեպքերում կարող է անուսանալուծության կամ լքվածության պատճառ հանդիսանալ:

✓ Հաշմանդամ կանանց մոտ հաճախ մեծ է սեռական բռնությունների ենթարկվածների թիվը:

✓ Մշակութային նորմերի հետևանքով կանանց անհասական գործունեության սահմանափակումները ևս թույլ չեն տալիս նրանց օգնություն ցուցաբերել հաշմանդամներին:

Հաշմանդամ կանանց մեջ ևս կան ակտիվ գործունեությամբ զբաղվողներ և մարդու իրավունքների պաշտպաններ

✓ Հաշմանդամ կանայք ստեղծել են գենդերային հիմնահարցերով զբաղվող կոալիցիաներ (օրինակ՝ Կանադայի Հաշմանդամ Կանանց Ցանց, Ուգանդայում Հաշմանդամ Կանանց Ցանց և Միջոցներ կազմակերպությունը):

✓ Միացյալ Ազգերի Միջազգային Շարժունակություն կազմակերպությունը նպաստում է հաշմանդամ կանանց համար ուսուցման կազմակերպմանը և տնտեսական զարգացմանը:

✓ Հաշմանդամ կանանց ակտիվիստները պայքարում են աղետների ռիսկերի նվազեցման մասնագետների հետ, որպեսզի նրանք հաշվի առնեն գենդերային դինամիկան աղետների դեմ անհատապաշտպանվածության ժամանակ:

## 6. Եզրակացություններ կանանց համար

Միջազգային փորձը ցույց է տվել, որ աղետները տարբեր ձևով են ազդում կանանց և տղամարդկանց վրա՝ նրանց միջև եղած անհավասար հարաբերությունների պատճառով: Հետևապես՝

✓ Տղամարդկանց և կանանց միջև դերերի և պատասխանատվությունների տարբերությունները ճգնաժամերի և աղետների ժամանակ գենդերային տարբերություններ են առաջացնում նրանց ամենօրյա կյանքում:

✓ Դեմոգրաֆիկ փոփոխությունները ցանկացած հասարակության մեջ ազդում են գենդերային հարաբերությունների վրա: Այդ փոփոխություններն ավելի հաճախ են ազդում կանանց վրա, քանի որ նրանք են կերակրում, խնամում հիվանդներին և մեծերին: Երբ տղամարդիկ մահանում են, կամ մեկնում են այլ վայրեր աշխատելու,

կանայք են դառնում ընտանիքի համար միակ հոգացողները:

✓ Աղետների տնտեսական ազդեցությունը ցույց է տալիս, որ աղետների ժամանակ արտերկրյա խնդիրները դառնում են համընդհանուր և ավելի քիչ հնարավորություններ են ստեղծում կանանց համար: Պատճառը կայանում է նրանում, որ տղամարդիկ մեկնում են այլ վայրեր աշխատանք փնտրելու, մինչդեռ կանայք մնում են տանը և հոգ են տանում իրենց ընտանիքների համար: Տնտեսական ազդեցության պատճառներից է նաև այն, որ կանայք կարող են ստիպված լինեն վաճառել իրենց անձնական սեփականությունը, այդ թվում նաև թանկարժեք իրեր և ոսկեղեն: Միևնույն ժամանակ աղետները երբեմն բարձրացնում են կանանց կախվածությունը տղամարդկանցից և կանանց դարձնում են ավելի խոցելի գենդերային բռնության հանդեպ: Օրինակ՝ Օրիսայի ջրհեղեղի ժամանակ հայտնաբերվել է, որ աղետից փրկված շատ կանայք ենթարկվել են թրաֆիքինգի և ստիպողական սեռական աշխատանքի:

✓ Ֆիզիոլոգիական ազդեցությունը նշում է, որ չնայած և՛ տղամարդիկ և՛ կանայք ֆիզիոլոգիապես տուժում են, սակայն կանայք ավելի են ենթարկվում ֆիզիոլոգիական սթրեսների: Կանանց սթրեսը կապված է իրենց ընտանիքի ռիսկի ըմբռնման հետ: Աղետների ժամանակ իրենց տնային տնտեսությունների և սոցիալական կառույցների կործանումը կանանց ավելի խոցելի են դարձնում սթրեսների նկատմամբ:

Որոշ կարևոր ուղղություններ, որոնց հետևանքով տղամարդիկ և կանայք ենթարկվում են աղետների բացասական ազդեցությանը, հակիրճ նկարագրվում են ստորև.

♦ Հանկարծակի տեղի ունեցող բնական աղետների հետևանքները (ջրհեղեղ, ցիկլոն, ցունամի, սողանք և այլն)

✓ Կանայք ավել շատ են ենթակա աղետների հետևանքով առաջացող վնասվածքների հավանականությանը, որը պայմանավորված է նրանց սոցիալական սահմանափակումներով և գենդերային դերերով:

✓ Որոշ մշակույթներում կանանց և աղջիկներին չի թույլատրվում լողալ:

✓ Որոշ մշակույթներում կանանց երկարափեղկ հագուստը խանգարում է նրանց շարժունակությանը:

✓ Որոշ հասարակություններում և մշակույթներում արտակարգ իրավիճակների ժամանակ կանայք չեն կարող լքել իրենց բնակարանները առանց տղամարդկանց թույլատրության:

♦ Ոչ հանկարծակի տեղի ունեցող բնական աղետների ազդեցությունը (երաշտ, հողերի դեգրադացիա, անտառահատումներ և այլն)

✓ Ավելանում է կանանց աշխատանքի ծանրաբեռնվածությունը փայտի մթերման, ջրի և սննդամթերքի հավաքման և պաշարման, դեղաբույսերի հայթայթման գործում:

✓ Կանանց /միայնակ/ տնտեսությունների թիվն ավելանում է տղամարդկանց միգ-

ռացիայի պատճառով. Հայաստանում նշված կանայք գտնվում են չքավորության ենթարկված և անապահով ամենախոցելի խմբերի շարքում:

- Աղետներին արձագանքելու ցածր կարողությունը

✓ Նախազգուշացումները շատ դեպքերում չեն հասնում կանանց:

✓ Կանանց իրազեկվածության ցածր մակարդակը, աղետների նախազգուշացումներին արձագանքելուն:

✓ Կանանց կյանքի պահպանման ցածր հմտությունները, օրինակ լողալը և մագլցելը:

✓ Կանայք են զբաղվում երեխաների և մեծահասակների անվտանգության ապահովմամբ:

- Հողի սեփականության իրավունքի և գույքի այլ տեսակներին տիրապետելու սահմանափակ կարողությունները

✓ Առողջության և շուկաների ցածր հսկողությունը:

✓ Բնակլիմայական փոփոխություններին հարմարվողականության ցածր կարողությունները, որոնք առաջացնում են ցածր բերքատվություն:

✓ Եկամտի կորուստը:

- Ցածր եկամուտը

✓ Աղետները, ցածր բերքատվությունը և սննդամթերքի պակասը ավելի են մեծացնում խոցելիության աստիճանը:

- Կրթության ցածր մակարդակը

✓ Կանանց տեղեկացվածության ցածր մակարդակը և աղետներին արձագանքման և պատրաստվածության կարողությունների սահմանափակումները:

- Կանանց սահմանափակ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում:

✓ Կանանց կարողությունները չեն գնահատվում, նրանց կարիքները և պահանջները չեն բարձրաձայնվում և նրանք անտեսված են քաղաքականության և ծրագրերի մեջ:

## 7. Տղամարդիկ աղետների ժամանակ որպես գենդերային հավասարության գործակալներ

✓ Տղամարդիկ պետք է պաշտպանեն գենդերային հավասարությունը:

✓ Տղամարդիկ պետք է գենդերային ուղղորդման կոչեր հղեն այլ տղամարդկանց:

✓ Տղամարդիկ պետք է ամբողջական գործընկերներ հանդիսանան գենդերային-զգայուն ուսուցումների ժամանակ:

✓ Ղեկավար տղամարդիկ պետք է սատարեն գենդերային հավասարությանը իրենց կազմակերպություններում:

✓ Տղամարդիկ պետք է դիմադրեն գենդերային կարծրատիպերին:

✓ Տղամարդիկ պետք է հասկանան, որ կանայք բավականաչափ գիտելիքներ և հմտություններ ունեն աղետներին դիմակայելու համար:

✓ Անհրաժեշտ է անցկացնել առանձին ուսուցում՝ կապված գենդերային հավասարության/գենդերային ուղղորդման ժամանակ տղամարդկանց դերի վերաբերյալ:

## 8. Կառավարության քաղաքականությունը Աղետների ռիսկերի նվազեցման ժամանակ

Աղետները պետք է դիտել որպես գործընթացների փոփոխման հնարավորություն, որպես մի պլատֆորմ՝ օրինականացնելու և ստեղծելու հնարավոր և անհրաժեշտ սոցիալական, քաղաքական և տնտեսական փոփոխություններ՝ աղետների ռիսկերի և համայնքների խոցելիությունը նվազեցնելու համար: Նոր իրավիճակները և ռազմավարությունները պետք է կենտրոնանան գենդերային-զգայուն աղետների կառավարման ռազմավարությունների վրա:

Ազգային կառավարությունների, միջազգային զարգացման գործակալությունների, տարածաշրջանային կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց նպատակը պետք է լինի հետևյալը.

1. Ավելացնել քաղաքական պատասխանատվությունը և ֆինանսական միջոցները ԱՌՆ ժամանակ գենդերային ուղղորդման գործողությունների գլոբալ պաշտպանության համար:

2. Ազգային մակարդակով կատարելագործել գենդեր և ԱՌՆ հասկացությունների իմաստային և գործնական պատկերացումները:

3. Ստեղծել ինստիտուցիոնալ և անհատական կարողություններ և գործիքներ՝ ԱՌՆ ներքո գենդերային ուղղորդման համար:

4. Ճանաչել և մոբիլիզացնել կանանց հմտությունները և կարողությունները, պաշտպանել վերջիններիս, իրենց ընտանիքների և համայնքների անվտանգությունը՝ որպես աղետների ռիսկերի նվազեցման համակարգի մի մաս:

Համաձայն միջազգային օրենսդրական մեխանիզմների և համաձայնագրերի՝ կառավարությունները կարող են.

✓ Կատարել գենդերային վերլուծություններ և գենդերային ուղղորդման գործըն-

թացներ աղետների ռիսկերի նվազեցման, կլիմայի փոփոխությունների, աղքատության նվազեցման և գենդերային հիմնախնդիրներով զբաղվող նախարարությունների հետ համագործակցության միջոցով:

✓ Վերանայել ազգային քաղաքականությունները, ռազմավարությունները, նախագծերը և անհապաղ գործողություններ իրականացնել ազգային զարգացման քաղաքականությունների և ծրագրերի մեջ գենդերային ուղղորդման ուղղությամբ:

✓ Ազգային վտանգներին արագ արձագանքման համակարգերի մեջ ապահովել կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունները:

✓ Ստեղծել սեռի հիման վրա ձևավորված հատուկ տվյալներ և կատարել վիճակագրություն աղետների հետևանքների, գենդերային-զգայուն խոցելիության, ռիսկերի և կարողությունների գնահատման վերաբերյալ և մշակել գենդերային-զգայուն ցուցիչներ մոնիտորինգի համար:

✓ Ավելացնել հասարակության և զանգվածային լրատվական միջոցների տեղեկացվության մակարդակը աղետների ռիսկերի նվազեցման և կառավարման ժամանակ գենդերային կարիքների և գենդերային-զգայուն խոցելիության և կարողությունների վերաբերյալ:

✓ Աջակցել գիտական հաստատություններին կատարել ուսումնասիրություններ աղետների ռիսկերի նվազեցման, կլիմայի փոփոխությունների հարմարվողականության և չքավորության նվազեցման գործողությունների ժամանակ գենդերային-զգայուն քաղաքականության և ծրագրերի արդյունավետության ուղղությամբ:

✓ Ապահովել ԱՌՆ և կլիմայի փոփոխությունների հարմարվողականության միջև կապը գենդերային հեռանկարների մեջ:

✓ Աջակցել գենդերային-զգայուն ֆինանսական ռիսկերի գնահատման մեխանիզմներին, ներառյալ ռիսկերի ապահովագրումը և վերաապահովագրումը:

✓ Կատարելագործել աղետներին դիմակայելու պատրաստվածությունը և արձագանքումը և դրանք հասանելի դարձնել կանանց և տղամարդկանց կարիքների և պահանջների համաձայն:

✓ Ավելացնել կանանց մասնակցությունը աղետների կանխարգելման գործողությունների մեջ և ստեղծել հավասար պայմաններ կանանց և տղամարդկանց համար:

✓ Վերակառուցումը պահանջում է բյուջեի տրամադրում գենդերային զգայուն սոցիալական հիմնախնդիրների և գործողությունների իրականացման համար` տնտեսապես տուժած գոտիների վերականգնման համար: Այն ներառում է ժամանակավոր աշխատանքային ծրագրեր, տների վերակառուցում և անհրաժեշտ ենթակառույցներ ներառյալ կանխարգելող գործողությունները` ուղղված ներկա և ապագա խոցելիությունը, հատկապես շրջանցելով նախկինում առկա խոցելի իրավիճակները:

✓ Ավելացնել համայնքների և համապատասխան ազգային ինստիտուտների կարողությունները` գենդերային ուղղորդումը զարգացման բոլոր համակարգերում ընդգրկելու համար:

Աղետների կառավարման ժամանակ գենդերային հիմնախնդիրների արդյունավետ կառավարման նախադրյալները.

- ✓ Իրականացվող բոլոր ծրագրերում պետք է լինի գենդերային զգայունության և գենդերային վերլուծությունների վերաբերյալ ուսուցում: Այն նպատակ ունի բարձրացնել գենդերային զգայունությունը: Այն կօգնի գենդերային զգայուն աշխատանքային պլանների կազմմանը:
- ✓ Հատուկ ջանքեր են պահանջվում աղետների կառավարման հետազոտողներից, պլանավորողներից և քաղաքականություն մշակողներից, որպեսզի նրանք սեռերի հիման վրա ձևավորված տվյալների բազա, որը հիմք կծառայի տեղեկատվության հավաքագրման և վերլուծման համար, աղետների ռիսկերի կառավարման ծրագրերի նախագծման, մոնիտորինգի և գնահատման համար:
- ✓ Իրականացնել գենդերի և կանանց հզորացմանը նպաստող աղետների ռիսկերի կառավարման գործողություններ՝ ռազմավարական եղանակով և բոլոր ծրագրային նախագծերի միջոցով:

## 9. Գենդերային-զգայուն ռիսկերի գնահատում

Գենդերային ռիսկը ամենօրյա կյանքի մասն է կազմում: Աղետների ռիսկի գիտակցումը կարևոր նախապայման է հանդիսանում աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման համար:

Ցանկացած ռիսկի նվազեցման համակարգի հիմնական գործոնը հանդիսանում է ռիսկերի գնահատումը, ինչպես նշվում է Հյոկոյամա ռազմավարության մեջ «Ռիսկի գնահատումը աղետների ռիսկերի նվազեցման քաղաքականությունների և չափորոշիչների հաջող և համահունչ իրականացման համար անհրաժեշտ նախապայման է»:

Ռիսկի գնահատումը մեթոդոլոգիա է, որը որոշում է ռիսկերի չափը: Այն վերլուծում է հնարավոր վտանգը և գնահատում է խոցելիության աստիճանը, որը կարող է սպառնալ մարդկանց և բնությանը: Այդ գնահատումները ներառում են ռիսկերի սոցիալական, տնտեսական, ֆիզիկական և բնապահպանական գործոնները և հանգամանքները:

Ռիսկերի գնահատման ժամանակ պետք է հաշվի առնել կանանց և տղամարդկանց կարիքները, դերերը և պատրաստվածության աստիճանը, քանի որ ԱՌ կառավարման նպատակն է՝ ապահովել անվտանգություն հասարակության բոլոր ներկայացուցիչների համար:

Մինչև գենդերը ընդունված չլինի որպես ամենակարևոր գործոններից մեկը (այն ազդում է մարդկանց գրեթե բոլոր բնագավառներում կուտակված փորձի վրա, և չի ընդունվում որպես ուսումնասիրման և հատուկ տեսակետի առարկա) մասնագետները կշարունակեն ներկայացնել իրենց պատմության միայն մի մասը՝ անկախ նրանից, թե ինչ պատմություն է ներկայացված:

## Օգտագործված գրականություն


✓ Էնեrunն Ե., Աղետների դասrաստվածության ժամանակ սոցիալական արդարության նդաստում. Գենդերային զգայունության և համայնքների դլանավորման ուղեցույցեr (hաշվետվություն Գուջարդից,Հնդկաստան) 2001թ.

✓ Կամուrջ- «Գենդերի ներդրումը աrտակարգ իրավիճակների դեմ արձագանքման ժամանակ»

✓ ԱՌՆ ժամանակ գենդերային զգայունությունը: Քաղաքական և գործնական ուղեցույցներ: ՄԱԶԾ, Բնության Պահպանման Միջազգային Միություն, և ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն, Շվեցարիա, հունիս 2009

✓ Բնական աղետների ազդեցությունը կանանց վրա, Սանֆրանցիսկո, Չիիու Լ. Ռամդաս Կ. 2005

✓ Սիիդս, (Յոնեr Ա, Սենգուլ Ա., Գոդալան Պ.) Աղետների արձագանքման և վերականգնման ժամանակ կանանց մասնակցությունը, Նյու Յorf

✓ Էնարunն Ե (2006) Աղետների ժամանակ կանանց դեմ բռնությունը

✓ Ճգնաժամերի կանխարգելման և վերականգնման 8 կետ օրակարգ, 2007, ՄԱԶԾ http://www.undp.org/cpr/we–do/8–pa.shtml

✓ Ծրագրային փաստաթուղթ - Գենդեr և Բնական աղետնեr AMRO/PAHO

✓ ՄԱԶԾ 00064044 «ԱՌՆ ազգային կարողությունների հզորացում» երկրորդ փուլի ծրագիր, 2010թ. հունվարից-հունիս առաջընթացի հաշվետվություն.

✓ Կանանց հզորացում, UNIFEM, Աուգուստին Լոդեզ-Կլարոս, Սադիա Զահիդի, Համաշխարհային Տնտեսական Ֆորում

✓ ՀՀ համար սոցիալական ապահովության բազմակողմանի քաղաքականության մշակում, USAID SPSS 2009 www.spss.am

✓ ԵԽ Country Sheet Հայաստան, 2009

✓ «Կանանց դեմ բոլոր տեսակի խտրականությունների վերացում» կոմիտե

✓ Գենդերային ռազմավարության հայեցակարգ, 11.02.2010

✓ Կանանց վերարտադրողական առողջության բարելավման ազգային ռազմավարություն, ծրագիր և գործողությունների ժամանակացույց,2007-2015

✓ Հայաստանի գյուղի կանանց հզորացման ծրագիր, Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիա, Երևան 2007